Գրեցին Խորհրդականք առ Կարապետ Պատրիարք յորդոր լինիլ ուխտաւորաց գնալ յԵրուսաղէմ. զի 'ի Նուաղիլ Նոցա 'ի դառն ժամանակին յայնմիկ, առաւել ծանրանայր պարտքն 'ի վերայ Աթոռոյն։

Ի սմին ամի եկեալ էր յԵգիպտոսէ յԵրուսաղէմ յուխտ Խաչէր աղա, հայր Ալեքսան աղայի, և տեսեալ զողորմելի վիճակ Աթոռոյն, յայտ արար Խորհրդականաց, թէ են կալուածք Երուսաղէմի յԵգիպտոս տունք իբր 38, եթէ վաճառեսցին Նոքա Վ.ՊՖ՝ օրինօք, բերէ 200 քսակս դրամոց, և թէ պատրաստ են ոմանք յազգայնոց տեղւոյն գնել զայնս, որով դիւրութիւն լինի վճարելոյ զպարտս Աթոռոյն. և Նոքա ծանուցին զայս առ Ամիրայս. գրել ըստ արժանւոյն առ իշխանաւորս Յեգիպտոս, այլ որպէս երեւի այս խորհուրդ մնաց ապարդիւն։

Յայսպիսի տառապանս և 'ի Նեղութիւնս Խորհրդականաց, Գաբրիէլ Պատրիարք ոչ երբէք եցոյց Նոցա գոհութիւն ինչ, այլ դաղտ 'ի Նոցանէ գրեաց բանս դանկատանաց առ ազգայինս 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն Կարապետին այնմիկ, զորմէ գրեցաք. խմացեալ զայն Խորհրդականաց, գրեցին և ինքեանք, յայտ առնելով թէ որպիսի ոք իցէ նա, որպէս բարուք գիտէին զայն ազգայինք, եւ գոհունակութիւն զմիաբանութենէ։

Դիոնէսիոս եպիսկոպոս՝ մին յազգընտիր Խորհրդականաց, և Խորհրդական գրագիր, ետ զհաշիւն իւր (1824. 'ի 5 Փետրվարի), և 'ի 29 ինքնակամ եկ յԱթոռոյն և մեկնեցաւ գնալ 'ի Կոստանդինուպոլիս, զոր և ծանուցին Խորհրդականք Պատրիարքին և Ամիրայից։

Ի հասանիլ ազգընտիր Խորհրդականաց յԵրուսաղէմ կանոնադրութեամբ Նոցին, ոչ որպէս յուսայինն կարացին լինել ձեռնամուխ 'ի գործ կառավարութեան Աթոռոյն, զի բազում անգամ արգել և խոչ լինէին Նոցա Գաբրիէլեանք, և ելք իրացն մնայր անյաջող, ուստի հարկեցան դրել երկիցս առ իշխանաւորս ազգին, զի հնարս գտցեն բառնալ յԱթոռոյ առ ժամանակ ինչ զդահակալ նորին, զի թերեւս կարասցեն անարգել հոգալ զկարիս նորին, և Նոցա զիջեալ 'ի կամս Խորհրդականաց՝ բազում դժուարութեամբ կատարեցին զխնդիր Նոցա. մանաւանդ տեսեալ զթշուառութիւն